



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերմագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.

ստանձնել և տարածել նյութը ցանկացած մեդիայով կամ կրիչով
մեջբերել կամ օգտագործել առկա նյութը առերժեքում համար երբ

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



ԱԶԱՆ



895.99 2-1

- 28

1961 թ.

ՆԱԽԱՏԱՆ ԵՎ ԲԱՅԻՆ


Handwritten notes on the left margin: 25148, 276, 5178152, 5179.



Ի ԳԻՐԲ

Տպագրական տրեստի 2-րդ տպարան Յերեվան,
Պատվ. № 205 Տիրա՛ 500

ՀՈԿՏԵՄԲԵՐԱԿԱՆ



ՄԵՆԲ ԵՆԲ ՀՈԿՏԵՄԲԵՐԸ

I

Հոկտեմբերը—

թիւերը քո

բանդեց, բուրժույ:

Հոկտեմբերը—

բինանց յերախոյ ժահրոտ:

Հոկտեմբերը—

բանդեց վոսկե յերազներիդ բերդերը

ու վանց վոր կատուկ մի—

հոգուդ պողոտան հին—

ճզմեց:

Սպաս —
 թե կարող ես,
 շարժիր թևերդ,
 դանկումդ —
 թե կարող ես,
 կյանքիս դեմ —
 դավեր վորոճա,
 թե կարող ես
 ուխտդ ցույց տուր —
 վոռնա:

կարող ես,
 փորձիր —
 դիկաւատոր բռունցքս —
 դանկիդ հովանին ե:

II

Հիշում ես —
 մեր ուժը քամեցիր,
 կերար,
 մուժիկին —
 ուժից հանեցիր:
 Մեր հողին լակ —

քրտնեց քեզ համար,
 մեր սիրտն իսկ—
 կրունկիդ տակ թպրտաց:
 Իսկ դու—
 վայելքի գրկում,
 էնոջդ գրկում—
 տրորող կրունկովդ միայն շոյեցիր—
 արևիսաշ դեմքերը մեր:

III

Պիտե՞ս վոր,
 մարակիդ տակ ձաղկված
 մենք եյինք,
 վոր յելանք վոտի:
 Հոկտեմբերը—
 մենք բերինք.
 Հոկտեմբերը—
 մենք ենք:

IV

Հիմա—
 Հոկտեմբերը
 տանձել ե քեզ,

բանտել ե սիրտդ—
 բանտում,
 բանտումն ե—
 ե հողիդ անասամ,
 ու դու—
 բանտից արտում,
 դեմքիս ես հայում,
 ախուր ես շափից դուրս,
 դալարվում ես,
 փարվում ես վռաներիս սողալով,—
 աղերսում ես:
 Քուցե մահդ մտա ե,
 դուցե գուժ ես հայցում,
 բայց ո՞ւմ ինչ,
 բայց ի՞նձ ինչ—
 թեկուզ մեռնես իսկ—
ԿԽՆԴԱՄ!

ԼԵՆԻՆՀՈԿՏԵՄԲԵՐ

Դարերի խավարից արնամած,
դարերի յերկուներով մի հրե—
ծնվեցավ մի արև լուսավառ,
հրասիրտ մի արև աներեր:

Ու նստեց դարերի կոնակին —
դարերի հանճարեղ առաջնորդ,
որերը — մարակներ ձեռներին,
հարվածեց խավարը արնահոտ:

Յեւ զցանեց աշխարհի յերեսին—
արեւներ ու միտինգ անողոք,
միտինգում—Հոկտեմբեր հսեաոր,
միտինգում—Կոմկուսը մի բողոք:

Միտինգում վեր յելավ բանվորը—
քրտինքի ակունքներ իր քունքին
և բռնեց ուղին լայն, նորաբաց—
նոր կյանքը առած թիկունքին:

ԼԵՆԻՆ

Վարպետ հմուտ մի վորմնագիր—
ժամանակը քաջ ու տակուն,
կառուցել ե շենքն իր հսկա—
մեծ հավերժի անեզր գոգոււմ:

Բարձրացրել ե շենքն իր հալարաւ —
ամենաբարձր հարկի շեմքին,
ու, բանում ե քրտինք մտած,
արեւաբաշխ ժպիտ դեմքին:

Շենքի վերեւ նա կախել է—
 էլեքարոլամպ արեւն անմար
 ու լույսերով հեղեղել է—
 հազարամյա շենքն այդ անխախտ:

*
 * *

Ամենարարձր հարկում կռած—
 պատշգամբից հզոր ու սեք,
 իր հայացքը կյանքին հառած—
 այդ կենինն է խոսում, լսեք!!!
 1924

ՓԱՐԻՋԻ ԿՈՄՄՈՒՆԱՆ

I

Բողոք եր,
ցասում եր
ու ուումբ,
Փարիզը—
արյունով յերիզվեց,
յերերաց դարերի մեջքը
սարսափով,
մի հարված
որերի հին ուղին թեքեց:

II

Արշունի կրկեսս եր
 ու խնձույթ,
 կրկեսում—
 կանայք կային հերարձակ,
 կրկեսում—
 արշունը
 մանուկներ եր զրկել,
 կրկեսում—
 բանվորներ կային մարանչոզ,
 համարձակ:

Սարաափով
 դարերի ուղին բեկեցին,
 բանվորներ էյին համարձակ,
 որերի դաշտը—
 արշունով հերկեցին—
 մարանչոզ բանվորներ էյին
 ու կանայք հերարձակ:

III

Բողոք եր,

ցատում եր
 ու սարսափ,
 Փարիզը—
 արյունով յերիզվեց.
 որերը—
 բեկվեցին ու անցան,
 որերը—
 Հոկտեմբեր դալիթի սուրհանդակ:



1923

25178
~~1001 1977~~
~~1001 1001~~
 9229

A $\frac{T}{5119}$



ԲԱՅԼՇԵՎԻՉԿԱ

Որերի խուճապում շփոթ,
 ինչպես մի անան նժույգ—
 թռչում եր ուղիով ժխոր,
 յերբ կյանքը խաւար եր ու ցուրտ:

Թռչում եր անխուով, անան,
 անցնում եր ծերպեր ու ծմակ,
 յերբ կյանքի նեղ ուղին անանց
 փովել եր վտոքի տակ նրա:

Յեւեր եր մարտի դաշտում—
 քրքիջն իր փուել եր դրոշ
 լեվ ըմբոսա թռիչքովն անվախ
 դնում եր ուղին իր վորոշ:

Պնում եր խավարի կաժանով—
 Պալիքի պողոտան դրավել
 ու կանչում կոկորդովն իր ծանոթ—
 աշխարհին պայքարի հրավեր:

Պարերի պատնեշը խավար—
 պատուել եր կերոնով իր լուսե
 ու յեւեր Պալիքի համար
 լուսեղեն գամինիներ հյուսել:

*
 * *

Նա գիտեր, վոր Վաղը պիտի
 որերը դառնան հարսանիք,
 վոր կյանքը խավարի, քնի—
 կդառնա խնդություն ու բարիք:

Նա գիտեր, Վոր պիտի հոսեր—
 որերի մութ գրկում արեվը
 յեվ կյանքի սեվ կուրծքն ակոսեր
 իր հսկա տրակտորով հրե:

Նա գիտեր, Վոր Վաղը կգար
 խնդության բյուրավոր յերգով
 յեվ կուրծքն ավերված յերկրի
 կը զուգվեր կառուցմամբ ու բերգով:

Ու գրա համար ել գուրս յեկավ,
 խավարին ձեռնոց հեռեց
 յեվ մթնած որերում թռան—
 արեվի բյուրավոր հեռեր:

Ու գրա համար ել գուրս յեկավ,
 յերկարեց գրոշը Կ. Ու.
 յեվ յեղան միլլիոններ մեկանց—
 սրտերը գրոշին կապել:

ԹՈՒՐ ՃԱՄՔՈՐԳՀոկտեմբերին

Թ ո ի Ր, ճ ա մ ք ո Ր գ, Թ ո ի Ր, մ ե ծ և ճ ա մ ք ա ն ք ա Ր ո տ,
 հ ա զ ա Ր ժ ա յ ա ու խ ու թ ե Ր, խ ու լ ծ մ ա կ ն ե Ր մ թ ի ն.
 ք ու ն ժ ու յ զ ո վ հ Ր ք ա շ, հ ե ու լ ն ե Ր ի ն կ ա Ր ո տ—
 Թ ո ի Ր, ճ ա մ ք ո Ր գ, հ ո գ շ ե ն ու ղ ի ն ե Ր ը խ Ր թ ի ն:

Ը մ ք ո տ ա յ ե ս դ ու հ ի մ ա ու ք ա վ ա կ ա ն ջ ա հ ե լ,
 ջ ա հ ե լ, ք ա յ ց լ ա վ ծ ա ն ո թ ու ղ ի ն ե Ր ի ն ա յ գ խ ո Ր թ
 և ք ու ա ն հ ա ղ թ ձ ե ո ի ն—ա Ր ե ա վ ա ո ջ ա հ ե Ր,
 լ ու յ ա ե ն ա ա յ ի ս ճ ա մ ք ի գ, դ ու ա ն վ ա Ր ա ն ճ ա մ ք ո Ր գ:

Նժույգդ հրե, բոսոր—գիտե արդեն ճամբան,
 դիտե գնալ անկանդ, դիտե թռչել աշխույժ,
 վտաների տակ նրա—տուգեր գտան թամբան
 ու խրխինջում շանթող—հզորները մահգուլժ:

Յեվ շատ-շատեր հիմա, հեռվից, հյուսիս-հարավ—
 սպասում են, անվերջ աչքը քո հուր ճամբին
 ու սրտերով պապակ կարմիր ջրին ծարավ,
 սպասում են տոչոր քո ջրվեժի թափին:

Յեգիպտոսից մինչև հեռու—Յապոն ու Չին,
 Իրլանդիայից մինչև Հոովմ, Բերլին, Վարշավ—
 սպասում են հիմա մարտահրավեր կանչից,
 վոր դուրս յելենեն կյանքում մի անողոր արշավ:

Թռիլ ճամբորդ, թռիլ, մեծ և ճամբան ու ձիդ,
 հազար ժայռ ու խուժեր, խոր ծմակներ մթին,
 քու նժույգով հրբաշ, քաշաթուխք, հրձիգ—
 թռիլ, ճամբոթ, հող չեն ուղիները խրթին:

ՊԱՏԵՐԱԶՄ

I

Պատերազմ. —

.
.

Արևի թթի տակին —
տանկին ինչ,
սոււմբին ինչ,
մարդկային գանկերի
ու գիյերի
թոււմբին ինչ:

Արյունը—

Վոնց վոր խելազար մի հեղեղ,

զրկել եր—

գիյերի ավարը,

գանկերի կողոպուտը չոր

ու թռչում եր—

դյուղից-դյուղ,

քաղաքից-քաղաք,

հրճվանքով մի խելազար—

թռչում եր,

լիզելով—

շենքերի վտանքը քար:

Արյունը—

պարում եր,

գիվահան մի պարով,

պարում այդ—

միլյոնների մորմուքն եր

խտացած,

հագարների հառաչը—

ձուլվեր եր այդ պարին

ու պարը—


գասնում եր,

առնում եր
հորանոր մարդկային դիշեր
ու դառնում անհոգ. —
մինչդեռ ժամանակը —
բարդում եր իրար ուսի
տարինեք,
տարինեք,
տարինեք:

*
* *

Մընապարտում այդ
քանի հայրեր ընկան,
քանի մայրեր —
խեղդեց այդ սլարր
ու մանուկների քանի խմբեր —
զրկեց խոլապարն այդ:

Ու այդպես —
սլարր դեռ յերկա՛ր տևեց,
մահը —
զերանդին իր ուսած
դեռ յերկա՛ր թևեց —
աշխարհից - աշխարհ,



Շ Ի Ն Ա Ր Ա Ր



ԲԱՆՎՈՐԸ

Տարիների ճամբին ընկած
ու ծեծկված բազում անդամ,

հա —

կանգնել ե, —

վորպես մի ժայռ,

անընկճելի,

հաղթահարակ.

մեջքն իր թիկնեղ —

կաղնու. նման, —

վշտականգուն,

հզորակամ,

ու բարձրացրել —

զլուխը խրոխտ,
վորպէս մի լեռ ամպապսակ:

Ճակատն իր լերկ —
ձգված վորպէս
պատերազմի մի դաշտավայր,
ուր կռվել են տարիներով —
վիշտն ու խինդը —
դեմ-հանդիման,
ու այդ կռվից,
վորպէս հետքեր —
մնացել են ճակտին յերկաօր —
խրամները՝ խորաքանդակ
ու թումբերը՝
միանման:

Գազաթիցն իր —
տարիների ծոցիցն յելած
քամին բարակ —
թոցրել է,
ճերմկազարդ մազերը կոշտ,
խառն ու խոփով

և բայել և—

յերկ ու փոփոքի

ու գոգափոր մի հրատարակ,

ուր պարուժ ևն—

արեգակի շողերը վառ,

ցաք ու ցրիվ:

Պայքարների շարք և յեղել—

կիսադարյան

կյանքն իր դաժան,

ժարանչել և—

առնանհատուկ

նա անվհատ ու աներեր

և այդ հսկա պայքարներում—

կարիքիցը միշտ անբաժան,—

նա կրել և

կյանքն իր ուսին

ու այսորվա

կայան բերել:

Յե՛վ այսոր ել—

ձուրճն իր ուսած,

վորապես կոթող գոռ պայքարի,
 նա—

կանգնել է—

Գալիքի մեծ,

բաղմակով ճամբու վրա,

ու բանում է,

կռանում է,

քրտինք մտած քաջ ու արի

և կերտում է—

կյանքը նորոգ—

իր յերկաթե սալին դրած:

ՅՈՒՆԿԵՐՍ՝ ԻՑ — Ս. Խ. Հ. Մ.

I

«ՅուՆկերս»-ին
գրկել եմ,
կպել եմ նրա թևին,
թռչում եմ —
ամպերին հեծած,
յերբեմն ել՝
ամպերը մեջքիս:

Լազուրում
լողում եմ,

գեփյուզը
 փարսկել եւ վղիւս,
 համբուրում եմ
 շուրթերը նրա
 ու նա յել քնքուշ—
 կպել եւ կըծքիւ:

Թռչում եմ սդում,
 ցերեկիւս գոտումն եմ արդեն,
 արեւը հպարտ—
 դենիթի աթոռին բազմել եւ,
 միտինդ եւ կազմել,—
 ճառում եւ:
 Վարում—
 դեղջուկը հանդում,
 շողել եւ,
 արեւը —
 նրան փառում եւ:

Վարում—
 դարուն եւ,
 Բայը շողը—
 ջրել եւ ամենքի կաշին:

Հանդում
 գեղջուկը
 կանաչ է քանդում. —
 ուղում է
 վարարած գետերի ջուրը
 հանդերի շոր գոշին քաշի:

Ամպերից քամած արցունքով—
 հանդերը—
 ել շեն ուղում լողանալ,
 գեղջուկը—
 կանաչ է քանդել
 հանդերը—
 կապույտ գոտիներ են բանդել
 մեջքերին իրանց նազան:

Հանդերը—
 ժպիտ են հագել,
 ժպտում են—
 կանաչի շուրթերով,
 հանդերը—
 քրքիջ են հարդել

Քրքջում են

Ճրվեժի խուրձերով:

Հանդերում

կյանքը կենդան են,

ամենուր գեղջուկն են արի,

արևը հրամայել են նրան, —

թե —

«Մինչև քուն մանելս

«բոլորը վարի!»»

Ու նա յել —

յելեր են դվարթ,

կարծես գրազ են

յելել,

ուզում են

բոլորը,

բոլորը —

հերկել:

Ուրախ եմ չափից դուրս,

արյունս յեռում են,

վոնց վոր

դեմս միտինդ ե
 ու ճառողը
 Լենինն ե:

II

Մնայում եմ հորից:
 Ներքում—
 հետև ե քաղաքը,
 փովել ե,
 շողից բեղարած,
 հանել ե լեզուն իր—
 ծխնելույզներ,
 փնջում ե—
 ինչպես հանդերում փոված
 մի նախիր:

Նախիրում այդ—
 բառաչ կա,
 լերկաթե շառաչ կա,
 բառաչում են
 լերկաթե ձուլերը
 գավոզներն են այդ.

ճակատից նրանց —
մագութե քրտինք ե հոսում
ու խռպոտ կանչերիցն իրանց —
լուսթյան կուրծքն ե ակոսվում:

Փնչում են —
ձուլերն յերկաթե,
փնչում են, —
բայց
շողից չե այդ,
չե՞ վար —
իրանց շունչն ել
կրակ ե:
Փնչում են —
քանի վար,
ծանր ե բեռն իրանց, —
հանդերում
խրամներ քանդող դեղջուկին —
նրանք
դեռ քանի՜ արակատք պիտի տան:
Դեռ քանի՜ պիտի փնչան,
դեռ քանի՜
պիտի բանեն նրանք. —

հանդում

արտը կտարել ե,

հին շուժը—

անդոր ե արդեն,

խակ դեղձուկը—

դրագ ե յեկել,

հանդերի ամբողջ կրծքովն—

ուզում ե աղոսներ բարդել:

Դեռ քանի—

պիտի բանեն նրանք,

դեռ քանի պիտի վնչան.

Աբարանը—

չի՞թ ե ուզում,

Միայանը—

մերկ ե ու բոբիկ,

զոնե նրա համար ել—

կտավ տան կոպիտ:

III

Անցնում եմ ելի,

արեվը—

ավելի յե կիզում,

բայց վարում —
 ելի վարում են,
 ելի —
 հանդերի շոր կուրծքն են
 կիսում:

Ահա —
 հանդում
 շողին ե լծվել արորին,
 արակատորն ե,
 յելեր ե գյուղին այցի. —
 մայր հողը —
 կուրծքն իր բացել ե —
 յերկաթի դարավոր կարոտին:

Յեզները —
 պառկել են
 արևի կրակից բեզարած
 հայում են —
 խենթ ու մուրը,
 դեղջուկը —
 չի բղավում ել —
 «դեն, վարի,

«քե՛ մատաղ,

«թե՛ղ արա»:

Շողեշուհն յեզն ե լծվել
յերկաթե գուլթանի լծին:

IV

Քիչ հեռու—

հանդերը—

գուգվել են գվարթ,

շորեր են հագել—

ծփուն,

դեղջուհն ե հագցրել այդ,

դեղջուհը—

բանոց ու արի

ե հանդերը—

ծփում են

ծփում են,—

ծուփ-ծուփ,

կոհակ-կոհակ,—

ամենուր—

բամբակ ե,

ցորեն ե,

բամբակ ու գարի:

Տեսնում եմ—

ուելլսերը

յերակների նման

ցանցել են կուրծքը յերկրի,

պարավոյն և ճշում ուժգին,

որերը ճեպում են զվարժ,—

ամեն ինչ ժխտը և ու թափ:

Կյանքը—

շարժում և տենդում.—

կարծես թե,

վազալում նրա—

յերրորդ գանգն են խփել:

V

Ու եսպես—

հանուր և աշխատանքը:

Ամենուր բանում են.

ամենուր քրտինք և ու թափ,—

միլյոնն և յելեղ վտարի,

մուրճերը—

համերգ են յերգում,

կերտում են—

վաղը մեր անափ:

Եղպես ե
ամենքն են բանում,
դժուգացին—
բանվորին ե հենվել,
աչքը նրա ճամբին ե.—
չե՞ վոր դրաց ե յեկել,
բոլորը,
բոլորը —
վարեբա յե.—
բա ել մեր ե,
տրակատր ե ուզում:

VI

Ճամբան իմ—
յերկար եր,
ուզում եյի—
հորից գնալ,
բայց —
ճամբիս ուղեկցող արևը,
հսգնել եր,
զլուխը—
կախ եր զյեկ,
իջել մի լերան ուսին,
ուզում եր քնել:

Ամպերն ել—
 իրիկվա գեփյուռսից հարբած,
 փարվեցին իրար—
 ծիրանի շղարշներ հազած
 փռվեցին արեվի գլխաց—
 պարում եմ:
 Վարում—
 մթնաշաղ ե,
 գեղջուկը ել չի վարում,
 քաղաքները—
 ճշարուց գաղբեցին,
 ժխորը—
 նվագեց կամաց,
 ու նստել սկսեց հաղթական—
 խնամարը ծեր ու համառ:

Քաղաքում—
 ելեքարիկն ե դրության տերը,
 պսպղում ե քաղաքը:—
 Քացել ե բերանն իր,
 ժպտում ե.—
 ելեքարիկ ատամներն իր
 փայլում են:

Իսկ դժուար—
 մնջել ե,
 խավարի վերմակը—
 զլխին քաշած
 ննջել ե:

Ելեքարիկը—
 գեռ նրան չի հասել,
 չի գրկել գեռ նրան —
 հոսանքովն իր
 բորբ ու ցնցող,—
 ու դրա համար ել
 տեսմք—
 թե ինչպես տենդոս
 բանում եր գեղջուկը հանդում,
 թե ինչպես քրտինք մտած—
 Ջերի շոսեն եր քանդում:

*
 * *

«Յունկերս»ը—
 իջնում ե կամայ.
 ամպերը քնեցին վերում:
 Իջնում եմ—

«Յուհիերս»-ին հեծած:
 Մարերի մեջ թաղվել եմ.—
 հիշում եմ որերը հին—
 ինքս ինձ
 ամաչում եմ:
 Մնում եմ մի քիչ
 ու հետո—
 ուժգին հանչում եմ—
 «Պողոս'ւյն քեզ—

Ս. Խ. Հ. Մ. ՅԵՐԿԵՐ!!!

ՅԵՐԳԸՀակոբ Հակոբյանին

Որերում մշուշ ու ցուրտ,
 որերում համբ ու դանդաղ
 բոցփեցին սրտեր մեր հուր
 կայծերով վառ ու անթաղ:

Բրոնզաձույլ սրտերովը մեր,
 ազդանիշ մի յերգով յերանք
 յեւ առած նիդակներն անթեք —
 դարերի գրկից թռանք:

Յեվ հեծած ուրբը նոր
 հստույղներ մարտի անապարտ,
 պայքարի ճամբին տհեղ—
 կանգնեցինք փորպէս մի մարդ:

կանգնեցինք ու ծառս յեկանք,
 կուրծք տվինք հսկա զարկին
 ու զարկինք բոլորս մեկանց—
 վարդիներ անհաշտ մարտի:

Ու զարկինք հաղթ և հուժկու,
 ուզեցանք կյանքը բեկեր,
 յերբ հնչեց հզոր ու կուռ
 բու յերդը— «մեկ ել, մեկ ել»:

Ու զարկինք վազի սառած,—
 ու զարկինք հարբած յերդով,
 բեկեցինք կյանքը սառած,
 թույրինք նրան հեքով:

Ու առանք որերի թարին—
Լյանքը նոր, քրտինք ու բոց,
դուրս յեկած Գալիքի ճամբին—
Թռչում ենք փողոց-փողոց:

Թռչում ենք հիմա ազատ—
Գալիքի բեռներն ուսած
և յերզում բերնով հազար—
քու յերզը, մարտի գուսան:

1924

ՄԱՐՈՆՄարոյին

I

Միտքն իրա — վառ ու տոչոր
 և հողին թռիչքի կարուս,
 որերում չար ու սանջող —
 ապրում եր գեղջկունի Մարոն:

Յեւ սիրտը բանդարկված բազե —
 ուզում եր բանդը բանդել,
 ու յեղնել, աշխույժով վազել —
 կյանքի լեն չոլ ու հանդեր:

Բայց որեր չար ու դավում—
Թռչքը նրա վանդակել
և ճակատին նրա դավում—
Կնճիտներ եյին քանդակել:

Աշխարհը նեղ եր նրան,
սահմանն իր—չար ու դաժան,
աշխարհը նրա համար—
մի գյուղ եր, մի աղբյուր, մի ժամ:

Բայց սիրան իր թռչող ու ժիր—
ուղում եր սահմանն անցնել,
մինչ կամքը նրա ուժեղ—
«աղաթ»-ներն եյին սանձել:

||

Յե՛վ գանդաղ բեռնակրի համան—
սահում եր որերի աշունն
ու հասած թոնիրի վրա—
ձերերը որերն եյին հաշվում:

Որերը հաշվում եյին—
 արևի թաղպեհի վրա
 ու կյանքն ել սահում եր դանդաղ—
 դարերի թիկունքին նստած:

III

Բայց այսպես յերկար չբանդվեց,
 բռնության վանդակում կյանքը,—
 այլ կամքը հազարի քանդվեց
 ու հազարը դուրս յելան մեղից:

Քաղաքներն ուժեղ ճշացին,
 դյուղերը—զարթեցին քնից
 և կյանքի միտինգում հսկա—
 Մարտն իր կամքով նետվեց:

Նա սեղմեց ձեռներն իր կուռ,
 ապտակեց հին կյանքի յերեսին
 և յերկաթ կամքովն անդուլ—
 արշավեց որերի յետևից:

Աշխարհը Մարտի համար—
անձայր եր ու սահման շուներ
և սիրտը նրա անմար—
արևը նորոգ՝ վողջուհեց:

Արձակիկեց սիրտը կարոտ —
խավարի դարավոր բանդից
ու այսպէս քաջասիրտ Մարտն —
դյուզերի հին կարգը քանդեց:

Նա յեղով շենութեան մասնակից —
կառուցեց ջրանցքներ, առու,
խակ այսոր խավարի սրտին —
Ասածու ծեր դանդն և վառում:

ՌԱԲԿՈՐ

I

Խնչպե՞ս մի դաժան մղձավանջ,
 խափարի սարսափից հաճ
 դարերի փոշին եր հասել—
 մեր ժանդոս մտքերի դասն:

Խնչպե՞ս վանդակիս ըստի—
 մեր միտքը հատված, անկեզու
 քնկել եր սրերում անպէս—
 խափարի փոշին եր լիզում:

Ու մտայլ, ինչպէս ուրվական,
խաւփարն եր նստել մեր ճամբին
և դաժան յերախտովն իր ազան —
ուզում եր թոխչքը մեր լափի:

II

Բայց եզպէս չմտացինք յերկար
խաւփարի կամքին գերի,
արդեն նոր սրերը յերկար
ու լույսի բազանիք բերին:

Ամեն մի դաժնուում միժողեւմ —
Էնինքն հաղթական բազմեց
և յերան հազարներ նրա շուրջ
անխորտակ բանականեր կազմել:

Ու յերանք բոլորս մեկանց —
սլայքարել Ֆրանսից-Ֆրանսա,
մինչև փոք կյանքը բեկվեց
ու հաղթող դուրս յեկանք խրոխտ:

Իսկ յերրորդ Ֆրոնտում մարտի —
 յելեր ենք պայքարի եսոր,
 յերկաթե կամքով մեր անպարտ
 ամենքս մի խոհունս ռաբկոր:

III

Գալիքի հետախույզ աշտորում
 Ր. Կ. Ի. -ն ել փորակս մի ռաբկոր,
 նիշում ե դարերի լրագրում —
 յերկաթե ցուցմունքներն իր հզոր:

ՔՈԴՈՒՄՆ

Շատ սիրով ԳՈՒՄԵԴԻՆԻՆ

Բավական եւ ինչքան քանդեցին մեզ,
բավական եւ, ինչքան քանդեցին մեզ:

Բավական եւ,
ինչքան մուրացկան պառտավների պես տխուր
կուշ յեկած վանքերը—
քաշեն քս փեշը, թե—

«Հայի փող տուր»:

Բաժնակա՞նն ե,
 Կարո՞!
 Թափի՛ր,
 Թո՞թափի՛ր քո լուծը
 ու յեղի՛ր,
 Արարանն դու երկից թո՞ւր —
 գա՛վսգե գրկո՛վս գրկե՛մ քեզ:

Թո՞ւր,
 գրկե՛մ քեզ,
 ու քրանա՛ծ ճակատը քո հրկեզ —
 մազու՛թսս բերանո՛վս համբուրե՛մ:

Ուր դամ
 գրկե՛մ քեզ,
 միանա՛նք,
 ձուրթե՛նք
 առնե՛նք զե՛նքերը մեր —
 գազեթե՛ն ու գրքե՛ր
 ու յեղե՛նք գյուղերու՛մ,
 Խա՛վարի գե՛մ — կրկե՛ս:

ԲԱՆՎՈՐՈՒՅԻՆ

Որեղի պարում նա քանի դարուն և թաղել
ու քանի հուշեր են կորել իր հոգում,
իր սիրտը վշտոտ, ս քանի անգամ են դաղել—
այրելով նրա մեջ յերազ ու խոկում:

Ճակատն իր մրտա—կարիքի շուժն և հերկել,
մազերը վողբում են հերկերի վրա
դալիտի յան վրձինը—այտերն իր հերկել և
ու վեշտը խաչվել և շուրժերին նրա:

Բայց բիբերումն իր — արևը կայծեր և սլահել,
 հորդել են այնտեղից լուսեղեն նեաներ
 և նա անվրդով — կամքովն իր ըմբոստ ու ջահել —
 ձգում և որերին հրեղեն նեաներ:

Ըմբոստ և նա միշտ, կյանքն իրա յեղել և սլայթար,
 մաշինի բաշին և հյուսել իր հյուսեր,
 գավոյը կըլծել և ջղերն իր կուս ու յերկաթ
 և վառել մտքումն իր կերոն ու լույսեր:


Որերի սլարում նա քանի գարուն և թաղել,
 ու քանի հուշեր են կորել իր հոգում,
 բայց խեղճոյ խափարի ծեր կուրծքը նա դաղել և
 ու յելեր բռնության բերդերն և սոկում:

ՈՐԵՐ

Վանց փոր մեկից հալածական ու հետամուտ—
այդ որերն են իրար զրկած թռչում անհետ,
կայանն իրանց—արշալույսից արևամուտ
ու կտրվում ժամանակի ճամբում անեղբ:

Յեվ փախուստը նրանց զխտոզ ու հիացող—
այդ արևն է, լուրթ գեհիթում նստել համառ,
փոր զրկում է ու համբուրում արևմուտին ծիրանավառ
շուրթեր նրանց արնամանն ու կարկամած:

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ



17 տարեկան բուզար կոմյերիտուցուն, փո-
րր առեւմանգվելուց հետո գնդակահարվեց:
Շագանակագույն մազերով բուզար սլա-
տանուն, փոքն ընկավ «Կեցցե աշխատա-
վորների յաղթանակը» բացականչու-
թյունը շուրթերին:

17 տարեկան Փրանսագի կոմյերիտ Լուի-
Լերունին, փոքի շուրթերին «Ինտերնա-
ցիոնալը» մետավ ու սրտում՝ ճեղատվա-
կան ըսքախը:

I

Որերը—

մղձալանջ

ու մաղձ վինեն թող,

որերը —

սարսափ

ու արյուն:

Որերում —

մեր սիրտը մորթեն թող,

թող բանդեն մեր կամքը՝

բանտում:

Թող բուրժույն ու բանկիրն անընդհատ —

ժանդոտած դանակներ սրեն,

թող նյութեն —

գիվային դավեր,

ավեր ու արյուն լինի թող —

խընճույքը նրանց մերժելիս:

Թող սամեն առավոտ ծեղին —

կոմյերիս արյունով ներկվի

մայթերը գեղին Փարիզի:

Թող արևը մայր մտնի սարսուած —

բողբար աղջրկա հառաչից

ու միայն գետը սգա թող —

նրա գիակի առաջին:

* *

*

Թող լինի ելի ուեսկցիա,

Թող Ֆաշիզմը—

բըրբըջա խինդով:

Թող արյուն թքի,

Թող սարսափ թքի լերախիցն իր,

Թող թեքի դեմքը ճարպակալ—

հըրճվի թող,

Կոմյերիա աղջկա դիակովն առևանդ:

||

Հիմարներ...

Չըդիանն, վոր—

Ժագող արևը կասեցնել—

դըժվար է,

դըժվար է,

Թղթե թուճբերով հեղեղն արդիլել,

կամ թե,

անամիա է—

հրաբուխի ժայթքումը

կափարիչով մի — բանդել:

Հինարներ...

Ջրգիտեն, վոր —

վաղվա որերի թռիչքում,

նժույգների սրմբակի տակ —

պիտի ջարգվեն,

գանկերն իրանց հրեշամիտ:

Նժույգների —

վորոնք թռիչք,

կատաղություն են առնում —

այս որերի սարսափներից,

վորը առատ բաժանում է —

կապիտալը տիրակալ:

Հիմարներ...

Ջրգիտեն, վոր —

կա կոմիսներն,

կա պողպատե KIM-ը հզոր,

կա Լենինիզմ, —

վորոնք այս մութ գիշերները սարսափի,

պիտի փոխեն ցայգալույսի,

արշալույսի արևառ:

ԿՈՄՅԵՐԻՏ ԱՆՈՒՇԸ

I

Հայրն իրա մշակ եր հողի,
բանում եր արևին հալառար
ու դառնում, մանում անկողին—
յերբ գյուղին շոքում եր խավար:

Արտերին վողջույն եր ասում—
յերբ արև սփռնում եր առափոտ
ու արտի վտակն յերազում—
բանում եր, հողովն իր փառափոր:

II

Մոր դեմքը նման եր հողի,
 նոր հերկած արտերին նմանվող,
 ուր ցավի խոփը անցողիկ —
 հերկել եր ճակատը քրանալող:

Բանում իր և մայրը անդուլ,
 աչքն իրա դավալի գարունքին,
 բանում եր թե տան, թե հանդում
 կյանքն իրա — տառապանք ու քրտինք:

III

Բայց կյանքը շթողեց նրանց,
 վոր բանեն անդուլ, յեռանդուն,
 դատրեցին շնչելուց նրանք —
 դեմ գալով մահու գերանդուն:

IV

Ու դավալը նրանց անող —
 թափառեց աշխհարից — աշխարհ,
 և սիրտը հողին իր մանուկ —
 չար կյանքի հողմերին բաշխած:

V

Իրանց հին, կիսաքանդ գյուղից —
 նա ընկավ ժխորոց քաղաք,
 ուր կյանքը թռչում էր ուղիղ,
 ուր կյանքը — ճիշ էր, աղաղակ:

Քաղաքում նա շրջեց յերկար,
 խոցերով ամբարված սրտով,
 շալակած վշտալի իր ներկան
 նա շրջեց հիվանդ ու վրդով:

VI

Քաղաքից հեռու, գավոզում,
 յես տեսա մի որ Անուշին —
 նա աշխույժ նրեկան էր գոգում,
 ույժ տված իր ընկեր Վանուշին:

Բանում էր նա քրտինք մտած
 ույժն իրա լարում, հա՛ լարում,
 ու փոսքի տակն իրա փռված —
 յերկաթե վիշտալն էր դալարվում:

Ուրախ եր Անուշը բանավոր,
 Ժպիտը աշտերին՝ գրոշակ,
 մոռցել եր նա գյուղն ու անգորը,
 և ճամբրան նրա հին ու փոշած:

Նա հմիա—գինավոր և ԿՅԵՄ-ի,
 Իլլիչին և ապրում նրա մեջ:
 Ճառում և նա կյանքի բեմից—
 մտքովն իր ազատ, նորասենյ:

ՆՈՐԵՐԻ ՄԱՐԶԸՊատկոմնական քայլերի ուղիքով

Ո՛ն սյուն-սյուն, ո՛ն շարք-շարք, առանջ,—
 աներեր ու քաջ ենք մենք,
 արևից առաջ ենք մենք,—
 ո՛ն, սյուն-սյուն, ո՛ն, շարք-շարք, առանջ:

Ո՛ն, առաջ, ձախ, անջ, ո՛ն, առաջ, ձախ, անջ—
 որերից արագ գնանք,—
 վառ, ինչպես կրակ, գնանք,—
 ո՛ն առաջ, ձախ, անջ, ո՛ն, առաջ, ձախ, անջ:

Ո՛ն, քայլ-մարշ, սն, քայլ-մարշ, առանջ,—
 սրերի տերն ենք մենք,
 մեր կյանքը՝ թափ ու հեր,—
 սն, քայլ-մարշ, սն քայլ-մարշ, առանջ:

Ո՛ն, սյուն-սյուն, սն շարք-շարք, առանջ,—
 Գալիքին ջան ենք տանում,
 հներին մահ ենք տանում,—
 սն, սյուն-սյուն, սն շարք-շարք, առանջ:

ՓԱՌԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԿԻՄ-ին

I

Մեր յերկաթե մուրճերը —

քեզ,

դարկերը —

քեզ,

քրախնքը —

քեզ,

յեռանդը —

քեզ,

մեր մուրճերի դուժարը —

քեզ:

Մեր պողպատե կորովը—

բե՛ղ,

ջղերը—

բե՛ղ,

սրտերը—

բե՛ղ,

մազուլավոր ձեռները—

բե՛ղ:

II

Թե խավարը—

ճամբեդ փակի,

Սրեր—

բե՛ղ,

հաղթանակիդ—

Ժե ուժ պակսի,

մեր կյանքը—

բե՛ղ:

Պայքարներում,

մեր արյունե դրոշը—

բե՛ղ,

մարտահրավեր

քո շեփորին—

աշխարհաույժ

մեր ույժը —

քեզ,

միլյոններով

մեր թափը —

քեզ:

Պայքարներով,

վորպես նավեր,

Քալիքը —

քեզ,

դարերը —

քեզ,

տարիքը —

քեզ,

Հավերժը —

քեզ:

III

Արևաշող սրերը —

քեզ,

Նորերը —

քեզ,

յերկաթակուռ մութները—

քեզ,

դարկերը—

քեզ,

մեր մութների դուռնաբլուրը—

քեզ:

ԲՈՂՈՐԸ—

ՔԵԶ:

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐՈՂ

Ե՛լ—

բուրժու՛յ,

պալատները —

կղզիներ են դարձել,

մի տե՛ս —

կոծվում են,

ծեծվում են նրանց կողերը:

Ե՛լ—

բուրժու՛յ,

յերկիրը —

հեղեղ է,

ամեն տեղ է —

հորձանքը մահու:

Ե՛յ —

բուրժույկա,

պալատներից գոները

բաղխում են,

մի տես —

ո՛վ են:

Վախում էս,

հա՛, —

շողովադ

ու քե՞՞ք էյիր կարծում:

Չէ,

ԿԻՄ-ի բանակն է,

հորդել է —

վոնց վոր հեղեղը:

Յելեր է,

Թափովն իր գրանիտ,

ծառայել ե,
 ու տենդոտ տեմպովն իր—
 պալատներիդ հիմքերն ե քանդում:

Շոկոլադ
 ու քեֆ եյիր կարծում—
 բուրժույկա,
 քեֆիդ վերջակեան ե,
 գիտցիր.
 սալոնիդ մեջն իսկ—
 կոմսոմոլիստ Ջանսը
 լեկցիա պիտի կարդաս:

*
 * *

Ե՛յ—
 բուրժույ,
 պալատներդ—
 կղզիներ են դարձել,
 մի տե՛ս,
 կոծվում են
 ծեծվում են
 նրանց կողերը քանդվող:

1924



Մ Ե Կ Ն Ի Չ

ՀՈԿՏԵՄԱՆԵՐԱԿԱՆ

	յերես
1. Մենք ենք հոկտեմբերը	7
2. Լենին - Հոկտեմբեր	11
3. Լենին	13
4. Փարիզի կոմսունան	15
5. Բայշեվիչկա	18
6. Թոխր ճամբորդ	21
7. Պատերազմ	23

ՇԻՆՅԱՐԱՐ

8. Բանվորը	31	22
9. «Յունկերս»-ից — Ս. Խ. Հ. Մ.	35	24
10. Յերգը	49	27
11. Մարտն	52	29
12. Ռաբկոր.	56	53
13. Զողումն	59	57
14. Բանվորուհին	61	73
15. Որեր	63	74

ԿՈՄՅԵՐԻՏՅԱԿԱՆ

16. Մոպրային	67
17. Կոմյերիտ Անուշը	71
18. Նորերի մարշը	75
19. Փատարանու թյուն	77
20. Կոմյերիտական գրոհ	81



ՈՒՂՂԻՐ ՀԵՏԵՎՅԱԼ ՎՐԻՊԱԿՆԵՐԸ

Երես	Տ Ո Ղ	Տպված է	Պետք է լինի
22	1-ին ներքևվից	Թուիր, նամբոթ	Թուիր նամբորդ
24	13-րդ վերևվից	Արյունը—	Մահը—
27	5-րդ վերևվից	ու գյուղդ	ու ատուդ
53	3-րդ ներքևվից	սահում էր	անցնում էր
57	7-րդ վերևվից	որերը յերկար	որերը յեկան
73	6-րդ ներքևվից	ներկան	ներկան
74	5-րդ վերևվից	նա հմիա	նա հիմա
74	6-րդ »	Իլլիչին	Իլլիչն

ԳԻՆԸ 40 ԿՈՊ.

891.99

Ա-28

ՄԵԼ
ՕՐԻՆԱԿ

ՇԱՊԻԿԸ

Ե. Դ Ա Ն 2 Ո Յ Ի

80
59

Կրասնոպոլսր № 1689

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0040535

A $\frac{1}{5119}$